

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Թիի 262

ՌԻՐԱԹ

1869 ՓԵՏՐՎԱՐ 21

Սմեն օր կհրատարակուի : — Հասար 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ուղղը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 գրչ, դարձալ 400 թուոց համար , թղթատարութեան ծախքէ աղաւ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոց փարի դրանը կից հոր Գրատունը :

Ա.Ղ.Գ.Ա.Յ.Ի.Ն

Կրեմք թէ երէկ հրաժարեալ պատշխարքը փոխադարձ այցելութեան դացեր է անեն . Տեղագահ Ս. Հօր :

— Սրժան կհամարիմք հրատարակել հետեւեալ երկու նամակները սրոց առաջինը խճատարեան մեծարդոյ Օղսէն էֆէնտիի , և երկրորդն թէ ըրիտառիչն բաղմաթիւ ազգայնոց կողմանէ զրկուած են :

... Խմբագիր

Շնորհակալ եմ որ երեկուան նամակըս հրատարակեցիք : Սնոր մէկ օրինակը Մատիսի մեծ . Խմբագրին ալ զրկած էի , բայց շատնոց ՚ի վեր Ս. Փրկչի հիւանդանոցի վրայ բան գրած չըլլալուն համար Գ. Պ. Լճեկիին նամակը հրատարակեր եւ մերը ետ թողուցեր էր : Ինչու իցէ ձեռքերնիս բացուած ատեն փոխադրեալու իբրաւունքը ստանանք :

Ձեր երէկուան 260 թիւ թերթին մէջ մէկ խորհրդածութիւնը անայ , որ խան ինչոյն առ թաղական խորհուրդս ուղղած մէկ որոշման կը պատկանէր , այն է հիւանդանոցի անուանը իրաքանչիւր թաղական մասուկներէ վեցամեայ պայմանաւ վճարուած ամսականները , կրկին չարունակուիլն : Ս.յս որոշման ապօրինաւորութիւնը մէջ բերելով կըսէք թէ

« Եթէ արդի հոգաբարձութիւնը հիւանդանոցի 400 պատասպարեալները օրական 200 հօխայ հացով խորթ ընելու անկարող է , մինչդեռ ատեն եղած է որ ուրիշ հոգաբարձութիւն 750 պատասպարեալները 75 հօխայ հացով կրցեր են խորթ ընել , թող հրաժարին կամ հրաժարեցուցուին , որպէս զի կարող հոգաբարձութիւն մը դայ եւ այս դժուարութիւնները վերցուին եւայն » :

Սրտաբին աներով այս հետեւութիւննից իբրաւացի կերեւայ , բայց պարագայ մը կայ որ եթէ գիտնայիք եւ Ձեր ընթացողները գիտնային՝ այն ատեն այս հետեւութիւնը չիպիտի ըլլուեր :

Հոգաբարձուներէն մէկը , կրանն՝ Ղարաթիոց գեանին շինութեանը համար չը նախատեսելով Ս. Պատրիարքին հրաժարականին ընդունուիլը , 4500 ուկի փոխ տուեր է : Ս.յս ստակին փոխաբէն ձեռքը ոչ մուրհակ ունի եւ ոչ նութական արժէք ունեցող աւանդ մը , այլ 400 պատասպարեալները այս 400 ոսկին փոխաբէն բարոյական աւանդ մ'է , որոյ տարուատէն խնայութիւններ ըլլալով այդ 400 ոսկին պիտի վճարուի : Բայց հիմայ խնդրոյն վիճակը փոխուած է : Ձմեար սրմարդ չիլէնար հոն այցելութեան երթալ խնայութեան աստիճանները կրնային բարձրանալ , իսկ ամառը այնպէն չէ եւ գոնէ

կիրակօրեայ մաքուր ձեր մտիե ղէններ ունենալու է որ շարժուն վեց օրը խնայութիւնները հանդարտօրէն շարունակուին եւ պարտքը վճարուի : Առջեւնիս յուսալից ամիս միայն մարտը կայ որ, այցելուներէ ազատ կարենայ մնալ հիւանդանոցը եւ վճարման դումարը քիչ մը կ'առաջանար : Մանզումէ դադրած էր . հետեւաբար հրապարակահան քննադատութենէ ապահովութիւն մը կար . բայց Վիսմանի ծնունդը այս յոյսն ալ պարսպը հանեց , ասոր ալ ճարը կարելի էր գտնուել եւ դրան . այն է ձման Սիպիերիան որ միայն հիւանդներուն եւ ձերերուն ցրտութիւն ազդելէ ուրիշ պաշտօն չունէր , բուն Սիպիերիա դարձաւ եւ իր շղթաներուն ձայնը բոլոր պատապարտից ականջին սկսաւ հնչել , ըսելով կամ Լիւնթիւն կամ Շլ.Ք.Ա.Յ. : Բայց այս միջոցն ալ շատ չիտեսեց որովհետեւ շղթաներուն ձայնը Ազգին ականջին ալ սկսաւ հնչել , եւ մաղ մնաց որ պատասպարտները շղթայի դատապարտող սնձերը՝ Տէրութեան կողմէն շղթայի դատապարտուէին : Ուստի Չեղ կը հարցնեմ մեծ . Եմբողիւր ի՞նչ միջոց ընարելու էին այդ 41500 ոսկին բրդնելու համար : Չափազանց ինայողութիւն ընելը հիմայ այնչտի դիւրին չէ , որովհետեւ հետեւանքը անկում է : Ժողովուրդին համակրութիւնը գրաւելու միջոցին դիմելը կարելի չէ , որովհետեւ նոյն իսկ այդ մարմինը ժողովուրդին 4000 ստորագրութեանը դէմ քաշուած պատուար է : Ի՞նչ կրնային ընել ուրեմն բաց ի թաղական մտուկներու գիմելին : Ուստի եթէ կը փափաքիք որ այս մարմինը փոխուի՝ դուք ալ ձեր կողմէն հրաւիր կարդալու էք թաղական խորհրդոյ որ այդ 41500 ոսկին օր մ'առաջ ասն եւ 400 պատասպարեալ աւանդը ազատեն : Իսկ եթէ թաղական սրնատուկները անկարող են այդ ստակը վճարել , աւելի լաւ կըլլայ որ Ազգային

կալուածներէն մէկը կամ մէկ քանին ծախուի եւ այդ ստակս օր յառաջ վճարուի , որով Ազգը կրկին պարտքէ ազատած ըլլայ :

Այս սկզբունքը արդար է կամ չէ , հոս քննելու տեղը չէ , բայց սա միայն գիտենք որ հրաժարեալ Ս. Պատրիարքին սկզբունքներէն մէկն էր : Նա ժամանակ մը 400 հազար զուրուշ առնելիքին վճարմանը համար պատրիարքական կնիքը խիստ ամուր բռնած էր , երբ ստակը վճարուեցաւ եւ առնելիքը չիմնաց , թողուց ազգին կնիքը Ազգին , նոյնն է արդի հոգարարութեան ալ վիճակը , տո՛ւր առնելիքնին անմիջապէս կը թողուն հիւանդանոցի մտուկի բանալին : Բայց եթէ չես տար ինչ կուզես ըսէ՛ խոսքով կը պատասխանեն իսկ գարձքով — գործը երկու տեսակ է , մէկը ստակը բրցնել , միւսը հիւանդանոցին վիճակը Մասիսի մէջ ազէկ նկարադրել է :

20 Փետրվար 1869

Քերտ .

0 .

... Խոհադիր

Թեքիւտադի Ս. Խոսէ եկեղեցւոյ թաղական խորհրդի կողմանէ տա Գաարխարքարան ուղղուած խնդրադրի մը պատճէնն եւ մանաւանդ ասոր նկատմամբ Մասիսի ըրած մասնաւոր գիտողութիւնն , զոր իւր 904 թիւ թերթովն կը ներկայացնէր , մեր զարմանքն գրողուած ըլլալով չէինք կըրնար առանց դիտողութեան անցնիլ Որքան ալ այն յողումներուն մեծ մասերն Թագէտոս սրբազանին եւ Մաղլըմեանի կը վերաբերին , բայց եւ այնպէս պէտք չէ ենթադրել թէ զանոնք պաշտպանել կուղենք , ոչ . միայն մեզի ցաւառիթ ըլլալով այն պատուոյ անուններն՝ ճշմարտութիւնն ալ չուղեց սրտերնուս խորը բանտարկատ

մնալ, այն պատուոյ անուններն կը սեւեք՝ որ վատաշուք անձանց կընծայուին անխորհուրդ շրթունքներէ։

Այս ճշմարտութիւնն աւելի կը լուսաբանէ նոյն ինքն Մատիս՝ որ հակաթաղէտներն պաշտպանել ուղերուն՝ իւր ըրած դիտողութեան ճակատը այս բառերը կը գործածէ. «Թէ քիրտաղի խելահաս և յառաջագէտ մասը» այսինքն հակաթաղէտներն, զորս պաշտպանելու համար — չեմք գիտեր ի՞նչ միջոցէ ստիպուած — Մուսայից լեռնէն մինչև Արամաղդայ միահեծան դաւաղանին ծայրն հանել կուզէ . . . : Այսպէս դիտողութիւն մը ի՞նչպէս մեր ուշադրութիւնն չդրաւէր, և ի՞նչպէ՞ս չըզարմանայինք. զի մենք թէքիրտաղի մէջ ներկայ դանուելով չկրցանք այդ յոգուածին առաջին տողին մեծաբանելուն չափ արդիւնք գտնալ. բայց Մատիս անգամ մը գէթ ի Թէքիրտաղ թերևս այցելութիւն չըրած, կրցեր է վերջապէս չէրչելի դիտակալ Չինիլի խանէն մինչև Թրակիոյ ակունքը շոյափել. և հետևաբար շոյաղութեանք կը վատնէ այն ամականներն որ աւելի իր անձին յարմարաւոր էին . . . :

Մենք այլէկ համոզուած ենք որ այդ խելահաս և յառաջագէտ յորջորջուած խումբը՝ ինչպէս որ Մատիս կը կարծէ և կարծեցնել ասլ կուզէ, յառաջագիտութեան թշնամի՝ դեղձմանց պարագրուի, մուշեանդ վիճերու շարժառիթ, միտլ բանիւ՝ ազգին նիւթական և բարոյական ողբոյն գէտ դաւաճան և գահիճ մ'է։ Այս մեր բաժներն է թէ ուրուի կրնանք ապացուցանել . . . : Մակայն Մատիս՝ որ առանց բանաւոր փաստերու այս անդրադրու-

նական ճիշդիթ խումբը « խելահաս և յառաջագէտ » կը հրատարակէ, ոչ իրեն պատիւ կը բերէ և ոչ անոր, և մեզի համար ալ նոյն գովեստներն բանաստեղծական ճշմարտութիւններ են։ Աւելի ցաւալին մուսայանք յիշել, որ ասանկ պժգալի յոգուածներու պատանխանող նամակներն երբէք հրատարակել չուզէր կըր որ ազատախոս խմբագրի մը պատիւ չբերէր . . . :

« Բիշ մ'ալ Ս. Խաչի թաղական կարծուած խորհրդին դաւնալով կը հարցնենք թէ՛ այդ խմբագրիւն՝ որուն կողմանէ ստորագրելու ստիպուեր է, գիտնալով որ թաղիս հասարակութիւնն զինքն օրինաւոր չճանաչէր և չքնդուսիր։ Բաժնուս յայտնի ապացոյց մ'է թաղիս հասարակութեան այն բողոքագիրն, որ տակաւին առաջնորդական փոխանորդ արժ. Եղիշէ վարդապետին սենեկին մէկ խորշն կեցած կը գոչէ « թէ թաղական խորհուրդն իւր շրջանն շատոնց ի վեր յրացուցած է, թէ հրաժարականն սուղ չուզէր, թէ միշտ նորանոր խումբ թիւններ սերմանելու հնարքներ կը մտաբերէ, թէ միշտ ազրատին իրաւանց ձայնն խեղդել կուզէ », և այլն։ Այն տակաւին կը գոչէ, անանկ որ շրջակայից արձագանգներն ի թունդ հասած է։

Ռատի քանի որ տեղոյս հասարակութիւնն այս աստիճան գրգռուած է իւր խորհրդին դէմ, և իբրև հակառակմանագրական կը նկատէ՝ ինչպէս է իրօք. հետևապէս այն խնդրագիրն այնքան ունի արժէք, որքան ինք ունի հասարակութեան քով։ Անիրաւութիւն մ'է, քանի որ խոց շրջանն երկար ժամանակէ ի վեր յրացուցած

է, և հասարակութիւնն ալ սահմանա-
 գրադէս դինքը չընդունիր, և ինքն
 գեւ հասարակութիւնն ներկայացնո-
 ՞ւցի մը պէս՝ ասանկ խնդրագիր մը կը
 շինէ և կը շտէ և Պատրիարքարանի
 ալ կը բացել կաշխատի. անիրաւու-
 թիւն մ'է առանց օրինաց և իրա-
 ւանց՝ իւր կիրքերը յագեցնելու հա-
 մար սրբազան եպիսկոպոսի մը համբա-
 աղարտել. և Պատրիարքարանի մը պատ-
 կաւելի ատեան խաբել ու զել : — Ա-
 ւասիկ Մասիսի երեւակայած «խեղա-
 հաս և յառաջագէտ» խմբին մէկ փո-
 քըր արդասիքն՝ զոր անխառն խիղճ
 մ'ունենցողն զիրնար մարտել : Զանց
 կրնենք յիշել թէ կարեւորութիւն չու-
 ՞ղեցինք առջ քոյն օրհասական նամակին
 սինքըր սողերն գիտողութեան առ-
 նելու, որոնց ճգճխ խնամաներն դինքն
 արդէն բաւական նշուակած են. ճրդ-
 ճխ խնամաներն՝ որ աւելի Պիւթիա-
 կան պատգամներուն նման՝ երեւակա-
 յական ենթադրութիւններ էին քան
 թէ այլ ինչ :

Խօսքերնիս վերջացնել ուզելով
 կը խնդրենք Մասիսէն, որ ինչպէս
 թողէս եպիսկոպոսին մտացածին
 յանցանքներովն իւր շատ թերթերն
 միտոնց, ու աղայնաց սուգ և վիշտ
 առթեց, նմանապէս գէթ մէկ անգամ
 մ'ալ այն «խեղահաս և յառաջագէտ»
 անձանց ըրած ազգասիրութեանց և
 մեծագործութեանց մէկ պատկերն
 ներկայացնէ, որպէս զի սրբազան թա-
 գէտէն վրայացած՝ որտերն, աննց-
 մալ արիւնքն. և սրամութեան ար-
 ցունքներով ընդարմացած աչերն,
 քիչ մ'ալ ուրախութեան նոր կայծե-
 ՞րով փայլատակի :

Թէ քիրտաղ 10 փետր. 1868

Մէկ քանի պատերազմական նու-
 ւեր կրեակ գրկուեր են, կողին գրա-
 նուող կայսերական զօրքը եւս գար-
 ձունելու համար :


— Մայրաքաղաքիս ամերիկեան
 զեւպանատունը երէկ գրօշակերով
 զարդարուեցաւ ի պատիւ կրանթ զօ-
 րապետին, որ երէկ Վաշինկթընի մէջ
 նախագահութեան գահը բարձրա-
 յեր է :

— Շաքիր Էֆէնտի անուն հա-
 բուս գրամատեր մը Բ. Դունէն խնդ-
 բեր է որ արտօնութիւն արուի իրեն՝
 Բերայի նախկին գերեզմանաւանս վրայ
 հասարակաց պարտէզ մը շինել :

— Օդոսս. Մուլթանը Մէճիտիյէ
 պատուանշան շնորհեր է Յուսաւ փա-
 շայի մարմինը բերող զազգիական շո-
 գեւառուն բոլոր պաշտօնակարաց, ի-
 բնեց աստիճանին համեմատ :

— Ազեկանդրիայէն լուր կուտան
 թէ քօլերայի դէմ կանխադառ-
 շութիւններ ձեռք առնուած են Ե-
 դիպոտի մէջ. և այս բանիս համար
 որոշուեր է որ ուխտաւոր ամառոց նա-
 ւերը քառասնեակ (քառանթինա)
 պահեն : Մուէիչի մէջ ալ կարմիր ծո-
 վին և Հնդկաստանէն եկող նաւերը
 մասնաւոր զգուշութեանց ենթակաց
 եղած են :

— Հայէպի քաղաքական գործոց
 տեսուչ անուանուեր է Խանայիլ պէյ, որ
 առևտրական պաշտօնատան մէջ ժո-
 զովականութեան պաշտօն կրկարէր :



ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
 Հ. Ս. ԱՆՍՏՄԵՆՆ

ՏԵՂԳՐՈՒԹԻՒՆ Թ. Յ. ԳՈՒՐԲԷՆՍԻ